

սկսվին իրենց գեղեցիկ ապագան, եթե այսօրուան մեր անաբեկ ու թշուառ տա-
րագիրները՝ դեռածին արեւուն տակ ամ-
փոփուլին այլեւս թաղցրիկ եւ ապահով բոյ-
ներու – մայրենի՝ բոյներնուն – մէջ անքակ-
տելի ստիփանքով մը բոլորուն մեր ու վեր-
ջապէս գտնենք ազգովին մեր *Երեւն* ար-
դար ու նուիրական բաղձանքներուն իրա-
գործումը՝ այն ատեն, այո՛, մի միայն այն
ատեն իբր ոսկեշող փարոս մը յաւերժօրէն
պիտի փայլի աչս մեր արիւնի պատմութեան
բոլոր տարեթիւերուն մէջ զմեզ ողջունող
այս **ՀԱՅԱՍՏԱՆ** ին՛ն, **ՀԱՐՈՒԻՐ ՔՍՍԱՆ** եւ
ԵՐԵՒԱՆ:

Ասո՛նք են այն ամենապերճ մարդկանք-
ները՝ զորս բովանդակ Հայրենեան կ'ուղ-
ղէ Մխիթարեան Յարկիս պաշտօնաներն
ու Հայ մամուլի երեցագոյնը « ԲԱԶՄԱ-
ՎԷՊ »-ի՝ իր ձեռնուհերով տարույն այս
նորածագ վաղորդակնին:

Հ. Դ. ՏԱՅԵԱՆ

ԲԱՆՁԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻ ՅԻՍՈՒՍԵԱՆ

(Շաբ. տիկս Բազմ. 1922 էջ 354)



Որպէս ունին տեսանել բարեմիտ ընթերցողը՝ բուն պատճառ և շարժառիթ իսկ թղթակցութեան կաթողիկոսին Հայոց Աղեքսանդրի ընդ Կղեմէս Պապին Հոռովմայ՝ ի լոյս գալ բացայայտ իմն կերպիւ ի կոնդակէն, թէպէտ չէր Միջոյէն Զմառ չեան՝ որ տեսեալն էր միայն զլատին թարգմանութիւն¹ այնր՝ « թէպէտև ոչ հարազատ իմացուածով » ի Յակոբայ Վլխլտէ՝ տայ այնմ ալ իմն նշանակութիւն՝ հետեւելով անշուշտ բանից և վկայութեանց թարգմանիչ վարդապետին, որ որպէս ունին մի ցուցանի ի մօտը՝ ունիւր յայտնի

պատճառս հակակրութեան ընդդէմ կա-
թուղիկոսին Հայոց Աղեքսանդրի:

Որպէս ի յայտ գայ ի բանից կոնդա-
կին, Աղեքսանդր կաթուղիկոս խնդրեալ
էր ի Պապէն Հռովմայ պատուիրել իւրոյ
փաթեւայից կամ պատրեաց (վարդապե-
տաց), որք ի Պարսկաստան ի ձայն՝
էջուզել զժողովորդն՝ « հերձաւածոդս
և հերետիկոսս » կոչելով զնոսա, որով անուն
Քրիստոնէութեան ծաղր և ծանակ լինէր
ի միջի մահմեդականաց . այլ սակայն
« Գիր սիրոյ և յարգութեան » Աղեքսանդրի
մեաց ձայն բարբառոյ յանապատի կամ
ի պատճառս « անհարգաւտ » թարգ-
մանութեան իմաց յերեսաց անկպաստ
բանից և զըզկանց Վիլլօտի, որ որպէս
ասացի՝ ի սօտոյ ճանաչէրն զԱղեքսանդր .

Այն ինչ ակն ունէր Աղեքսանդր ըստանալ է Պապէն գիր փոխադարձ « Երբ և յարգութեան », և ահա զայ հասանէ յԵջմիածին հետեւեալ գրութիւն կղեմէսի ի Հոովմայ՝ « Թէ որովհետեւ օտարացեալ « զուստրդ մոժանիւ կամիս առ մայրս « գորովագուրէ, պարտ է ճեզ զայդ զաւ « անուրթիւնդ ուղիղ զաւանուրթեամբ զոր « ծօց ցուցանել թէ ի պատարագն և թէ « այլ ինչ որ պատկանի ի բան հաւատոյ, « ապա խոստովանութիւնդ զընացես և « կնքեցես ամենայն լպիսկոպոսօքդ և « առաքեցես առ մեզ, և տեսեալ մեր « զպնդպիսի հաւատարմութիւն, ապա տամ « ճեզ հրաման ի վերայ ամենայն քաւ « րոզատուաց Հոովմայնոյս որք ի վիւ « նակի բոյդ են՝ զի հնազանդեցին ճեզ »:

Ստացեալ Ալեքսանդրի գայնալսի իմն լաւոնական և կոն պատասխանն ի Պապէն Հովովայ՝ հակառակ ակնկալեաց իւրոց, և տեսեալ թէ չկայ այլ իմն միջոց հաշտութեան, ուստի ստիպեալ բողոքէ առ արքայ Պարսից Շահ Սուլթան Հօսէյն. և ստացեալ զհրովարտակ ի նմանէ յամին 1711, հալածական ատենէ ի սահմանաց անտի Պարսից զքարոզիչսն Հովովայ, հասուցեանելով ի նմին ժամու քաղով չարիս այն ամենայն Հայոց՝ որք միացեալ էին ընդ Եկեղեցւոյն Հովովայ, խոս-

1. Լատին թարգմանութիւն կոնդակիս ապագրեցաւ ի Հոռով յամին 17(9, և Լատինազէտ բանասէրք կարեն եթէ կամին՝ համեմատել զայն ընդ նախազաղափարին:

տացայ ի վեր անդր տալ զպատճառ զըժ-տութեան և աստելութեան Յակոբայ Վիլ-լօտի ընդդէմ կաթողիկոսին Հայոց Աղեք-սանդըրի, Ահաւասիկ զայրալից բողոքագիր նորա առ կաթողիկոսն Էջմիածնի:

« Ետուր փակել վամքն քափուշիմաց որ ի թարվէզ քաղաքի, զի մի քարծրասցի սուրբ խա-չըմ քրիստոսի ի մէջ ամհաւատից, և զի մի կրթիցիմ մամկումը տառապնալ և աղքատ ժողո-վըրդեանմ այմմիկ, որպէս ի սկզբամ սմի կա-թողիկոսութեանդ՝ յորժամ հասեր ի Սպահանայ թարվէզ և երկրորդում աւուր երեկոյեան ժամում ի մէջ եկեղեցւոյ սկսար հայրոցաբար քարոզը ընդդէմ կաթողիկէ եկեղեցւոյն քրիստոսի, և դար-ձուցանելով բամզ առ ժողովուրդս վասն Ողյմ պատրի քափուշիմացն, թէ լուեալ իմն զի ամսեղ զարդնս ձեր տաքիմ և տայք ի ծնն զսոյնս շամց (այս իմքն մամկումս ձեր տայք ի կրթու-թիւն պատրիացն)՝ սպառնալով քո մահ սրօք պարսկաւ եթէ այլ ևս անմիցիմ.

որպէս և արարեր Ողյմ ամի զի զեցիցի ի Ողյմ թիվմ հայոց ՌժՅՁ կամ ՌժԾԷ ի զոստամնդու-պօլիս առ մեծ Վազգիրմ Օսմանցուց թէ ես Հայոց ազգիմ ֆիվայ տուողմ եմ և դոքա իմ ժողո-վուրդը մնամանդիլ ոչ ևս կամիմ իմծ, և նիւղի եմ ի կրօնից մերոց, ահա ետու ֆիվայ զի պատժի-ցէք այս ամուսն և այս ամուսն թուով իբրև 175 կամ 200 անծիմս որք ֆուսմզ եմ նիւղի հայրդ. որ և եղև կատարումն ֆիվայիդ, քամզի սուրմն ձերով-դէի կոտորեաց բազում մամկումս եկեղեցւոյ, և ումասն ետում չաքորայ. զի ի սուլու և ի տանջամաց մեղցիմ նեղութեանի՝ թող զայլ բազումս և հա-զարաց անծիմս որք փախտակականք եղիմ հաւա-ծամաց և մնացիմ զուրկ ի տամէ և ի հայրենեաց. Այլ և կրկին սկսար աղմկել և ի հիմամց շըջել տունս Հայոց թէ ի թարվէզ և ի Շամախի, եթէ ի Գանջայ և ի Թիֆլիզ և այլ զաւաստս և քաղաքս, որոյ ախամատեսն ես իմքնմ եղէ բազմաց որ դեռ ես եմ ի պատմաւս Ողյմ հաւածամաց շըջելոյ պամուդիտս և օտար երկրի».

Այլ սակայն ի հեճուկս այս ամենայն հաւածանայ՝ որոց սկիզբն եղև յամին 1689 յաւուրս Եահ Սէյճանայ արքային Պարսից և յառաջնորդութեան Ստեփան-նոս Արքեպիսկոպոսի Ամենափրկչեան Վա-նաց Կոր-Ջուղայի, կարացին միալ տակա-ւին Ռիսուսեանք և այլ կաթողիկ միաբանք ի Կոր-Ջուղա՝ ի շնորհս հզօր պաշտպանու-թեան և ազդեցութեան Եահրիմանեանց, որք զուով մեծահարուստք և ականաւորք ըստ ամենայնի՝ բազում զրամս ծախէին ի

զրունս դենպետաց և նախարարաց Պար-սից՝ ի նպաստ կաթողիկաց, և ապա ժա-մանակ մի ազատ կացուցանէին զնոսա ի հաւածանաց ազգայնոց. որով գնալով զայ-րացուցին զՍտեփաննոս առաջնորդն Զու-ղայի, և նորա գումարեալ զբահանայս և զհոգևորականս իւր՝ շուրջառաւ և սևա-ցեալ մոմեղինօք կատարեցին զթափօր անիծողական ի հրապարակին Մէյդանս կո-չելոյ, նզովս և անաթեմայս թափելով ի վերայ ազնուական և պայազատ տեւմին Եահրիմանեանց՝: Տեսեալ մահմետական Պարսից զայն արտասովոր արարողու-թիւն ի մեծի հրապարակին և ի հետա-բըրբրութեանէ մղեալ հարցին՝ թէ զինչ զործէք, և ընկալան զայս պատասխանի՝ թէ որպէս դուք զՍուլէի հերձուածող-սըն ձեր՝ նոյնպէս և մեք զհերձուածողսն մեր նզովմք:

Ո՛վ յետին տգիտութեան և անբրիս-տոսավայել վարուց և զործոց հոգևորա-կանացն ժամանակին, և դեռ ողբամբք և տրտնջմամբք թէ ընդէր այսբան տանջեցաւ ազգ մեր յերեսաց անողոր և այլակրօն թշնամեաց, այն ինչ մեք իսկ եմք թշնա-միք միմեանց՝ լուի վասն տարբեր դաւա-նութեան կրօնի:

Մի՛ անդր, ի բաց թողցուք այլ եւս զազգակործան կոխու վասն խտրութեան կրօնի և դաւանութեան, և ձեռս ձեռաց տուեալ իբրեւ ձլմարիտ Հայք սիրողք

1. Զկան այսօր ի Կոր-Ջուղա սերունդք և շատակդք Եահրիմանեանց ազնիւ տեւմին, զի զաղթեցան նոցա յԵրուսալ, և ի մասնաւորի ի Վենետիկ և ի Լիվօռ-նօ քաղաքս աստիջականն իտալիոյ, Եգիպտոսի և ան-ձնիկս յսկզբան 18րդ դարուն, և շիրիմք նոցա տե-սանին ցայսօր անդ Մադրաս, որպէս և աստ ի Կալկաթա: Հոյակապ ապարանք Եահրիմանեանց՝ որպէս և եկե-ղեցին « Սրբոյ Անտոնաց » ի նոցունց կառուցեալ ի մեծ պողոտային « Նազարի խիսման » կեղեցւոյ, ի վաղուց հեռէ ընդ աւերակս դասեալ կան, և մնայ միայն կանգուն բաղանիքն այն մեծ և հոյակապ՝ որը կառուցին նոցա ի Թաղէ մեծ Մէյդանի ի Կոր-Ջուղա և որ ցայսօր կոչի « Եահրիմանէնց Համամ », որպէս և դուրս պողոտային Նազարի՝ կոչի տակաւին « Եահրիմա-նէնց Դարվազա »:

ազգի և հայրենեաց՝ յայսմիկ հգնաժամու ազգիս, յորժամ լընալ և այլ ևս բարձի թողի լեալ է բազմաչարչար ազգ մեր ի ըրիստոնեայ կոչեցեալ ազգաց Եւրոպականաց, միանգամ ընդմիջու գործնացուց ազգային համերաշխութեամբ ի կանգնու մն իրոծանեալ տանն Հայկայ և ի նորոգումն յաւէտ խաթարեալ փառաց զաշցրանոն և զրախտանման Հայրենեաց մերոց, զի ըստ իմաստաւից բանից անմահ ընթերթողին « եղբարք եմք մեք՝ թէպէտ և մրրկաւ եմք զստեալը »: Մաղթելով ի յերկնից բաղձալին աէր և միաբանութիւն վասն բազմակածեան ազգիս Հայոց անդրանկի՝ մնամ ցանկալի վերականգման տառապեալ և նահատակ ազգիս ակընկառոյց՝

ՄԵՐՈՒՆԱԲ Յ. ՍԵԹԵԱՆՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՁԵՆԱԳԻՐՆԵՐ

ԼՈՒՏՈՆԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Սերով կը հիւրընկալենք Մեծ. Ս. Տէր Մ. Գրիգորեանի այս յօդուածը՝ որ զխաւորապէս լայնօրէն բաւարարական և հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ իր ներկայացուցած զրգարին վրայ, մինչ անոր մասին ըստ քիչ և համաօտ ծանօթութիւն կը գտնենք Հայագիտ. Կոնիքիբի կազմած Յուլական մէջ (Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum by Frederick Cornwallis Conybeare. London 1913. Add. 19727. էջ 2. ԽՄԲ.

Հարիւր վաթսուոն և չորս Հայկական Հին Ձեռագիրների ընտիր հաւաքածոյ մի՛ խնամքով պահած ունի այսօր Լոնտոնի հանրածանօթ Բրիտանական Թանգարանն, որք թէ՛ ըստ գեղարուեստական հնագրութեան և թէ՛ ըստ զարդանկարչութեան՝ սքանչելի օրինակներ են իւրեանց հազուադիւս կարգին մէջ, Եւ բնականաբար՝ երբ Հայը մի սպասելի գուրգուրանքով և սրտի մտօք՝ աչքի տակ է անցնում այդ հինաւորց հայկական աշխատութիւնը՝ այնպիսի մի եռացող բնիկ զգացումներով համակոււմ է՝ որ գերազանցապէս

անհասանելի են օտարաց հասկացողութեան, որք գրեթէ ըստ մեծամասնութեան լուկ հետաքրքրութեամբ և սառն բաղդատական աչօք են վերաբերում առ նոսաւ թո՛ղ պատկառանք մատչինք այդ հոգեպարար նշխարներին և զարմանահիւս հրեշտորդը սոփեբից: Զգուշութեամբ թըղթատենք այդ նուիրական էջերն: Ուշադրութեամբ կարդանք, հանդարտութեամբ ըննենք և պարծանօք հիւաններ: Ինչ ջերմեանդ հոգևով և անսպառելի կամաց զօրութեամբ, ինչ անդուլ աշխատութեամբ և նուիրական անխառն եռանդեամբ, այդ հեռաւոր մթին դարերում, երբեմն բարեգուշակ, բազմիցս դժոխային չարաբաստիկ հանգամանօք շրջապատեալ, Վանդուկ և Անապատում, ցորեկին՝ արևուն բնական լոյսով, գիշերն՝ ձիթածըպզի աղօտ լոյսով, որչափ համբերատար տընութեամբ վաստակեցան՝ մինչև կատարիլազործեցին այդ զորեկ զարմանալի գանձերի կտորներն: Նստեալ ծնգնածալ ի գետին՝ իւրեանց անբարեկեցիկ խցին մէջ՝ զուրկ ի կահից և հոլանի ի կարասեաց, անփառունակ փայտակերտ փոքրիկ « զազգային » ի հանդէպ սիրտն համակեալ հախ և դողի՝ յերկիւղէ մշտապատրաստ բռնաւորաց, բայց յոյսն առ Աստուած. գրիչն եղգնեալ կամ փետրեայ՝ սրեալ պատշաճաւոր ըստ հաճոյից. մեղանն վճիտ՝ կարմիր և սև, դեղին և կապոյտ, իրեանք բաղադրեալ ի բուն տարրականէն. մագաղաթ և թուղթ անձամբ յօրինեալ և յղեալ. ներկն ոսկեգոյն, արծաթագոյն, ձիրանի և լազուրաթի՝ իւրեանց իսկ ձեռագործ. իւրեանց ուղեղն՝ իւրեանց բնապարգև զեկավար, իւրեանց մատունն՝ իւրեանց ճարտարարուեստ մեքենայագործք. անփոյթ և անփորձ աշխարհիս վայելչութիւններից, Հաւատք, Յոյս և Մէջ իւրեանց կենաց հատոր, ամսներ և տարիներ անձանձիր զրեցին ու գրեցին այդ հեզահոգի « անուամբ և եթ » քահանայներն, խղճամիտ « սուտանուոն » զալիւրներն, եւ « անիմաստ » ծաղիկողքն, իւրեանց անմեռանելի վրձինով և անթառամելի երփներանգ թոյրերով, զարդարեւ